Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 1547 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԸ

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց պատմության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, որոնք ուղղակի կամ միջնորդավորված ազդել են մեր ժողովրդի պատմական ընթացքի վրա: Նման իրադարձություններից են հատկապես Հայաստանի բաժանումները: 387 թ. Պարսկաստանի և Հռոմի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Հայաստանը բաժանվեց երկու հատվածի՝ արևմտյան ու արևելյան: Հայ ժողովուրդն սկսեց ապրել և գործել միմյանցից էականորեն տարբեր կայսրություններում. նա այլևս ստիպված է շփվել տարբեր ժողովուրդների հետ և ենթարկվել նրանց մշակութային ազդեցությանը:

Հայաստանի վիճակը խիստ ծանրացավ հատկապես այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանի վերահսկողությունն անցավ Օսմանյան Թուրքիայի իշանության ներքո:

Տարածաշրջանում քաղաքական նոր ուժի ներկայությունն ունեցավ խիստ բացասական հետևանքներ[1]: Օսմանյան իշխանությունն իր տերության սահմաններն ընդարձակելու նպատակով պայքարի մեջ մտավ և՛ սահմանակից և՛ ոչ սահմանակից երկրների հետ: Հայ ժողովրդի համար հատկապես կործանարար էր XVI-XVII դարերի թուրք-պարսկական՝ տասնյակ տարիներ ձգվող պայքարը[2]՝ տարածաշրջանում որևէ կողմի գերիշխանության հաստատման, ազդեցության ոլորտի ընդլայման համար: Այսպիսի անելանելի դրության մեջ հիմնականում տեղային բնույթ կրող հայ ազատագրական երկդարյա (XIV-XVI դդ.) պայքարը թևակոխեց նոր՝ առավել կազմակերպված շրջափուլ:

Հենց այս ժամանակաշրջանում էր, որ Հայ եկեղեցին որոշեց համակարգել հայ ազատագրական պայքարը՝ ներառելով ազգային-եկեղեցական բոլոր դասերի ներկայացուցիչներին, այսինքն՝ այն պետք է ունենար համահայկական բնույթ: Այս նպատակը կյանքի կոչելու համար 1547 թ. Ս. Էջմիածնում գումարվեց համաժողով:

---

[1] Տե՛ս **Հ. Ղազարյան**, Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղասպանության պատմություն (1453-1922 թթ.), հտ. 2, Եր., 2010:

[2] Տե՛ս **Пигулевская И. В.**, **Якубовский А. Ю.**, **Петрушевский И. П.**, **Строева Л. В.**, **Беленицкий А. М.** История Ирана с древнейших времен до конца XVIII века. М., 1958. «История Востока», т. III: «Восток на рубеже средневековья и нового времени. XVI-XVIII вв.». М., 1999. հմմտ. “The Reign of Suleiman the Magnificent, 1520–1566”, in: **V. J. Parry**, A History of the Ottoman Empire to 1730, ed. M. A. Cook, Cambridge, 1976. **Y. Bomati & H. Nahavandi**, Shah Abbas, Emperor of Persia, 1587-1629, Los Angeles, 2017:

Հայ պատմագիտության մեջ այս խորհրդաժողովին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Պետք է նշել, սակայն, որ առ այսօր համակողմանի քննության չի ենթարկվել այս խորհրդաժողովի՝ որպես հայ ազատագրական պայքարի նոր շրջափուլի ուղենշային դերակատարությունը, բավարար չափով չեն ուսումնասիրվել հայոց պատվիրակության գործունեությանն առնչվող օտարերկրյա արխիվները, ի մի չեն բերվել հայ պատմագիտական մտքի եզրահանգումները: Այսինքն՝ առանց այս խնդիրների քննության ու վերլուծության՝ ազգային-եկեղեցական կյանքում 1547 թ. զարգացումների և գործընթացների պատմական համապատկերը թերի կլինի: Ավելին, այսօր որոշ ուսումնասիրողներ արժեզրկում են Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի անուրանալի ներդրումը հայ ազատագրական պայքարում[3]:

Առաջին հարցը, որին կարելի է մանրամասն անդրադառնալ, վերաբերում է 1547 թ. խորհրդաժողովը նախաձեռնողի անձին ու նրա գործունեությանը: Ժողովի նախաձեռնողը, ապա և պատվիրակության ղեկավարը Ամենայն հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցին էր (1545-1567 թթ.)[4]:

Սալմաստեցու ծննդավայրի խնդիրը: Մեծանուն հայագետ Մաղաքիա արք. Օրմանյանը նրա ծննդավայրի վերաբերյալ գրում է. *«…Սալմաստեցի կոչուած է ծննդավայրէն առնելով, թէպէտ Կոստանդնուպոլսեցի ըսողներ ալ կան»*[5]: Այսպիսով, Մաղաքիա արք. Օրմանյանը Սալմաստը համարում է ծննդավայրը: Նույն կարծիքին է նաև պատմաբան Լեոն: Վերջինս, սակայն, հատուկ շեշտում է, որ Սալմաստեցու պատանեկությունն անցել է Կ. Պոլսում[6]: Ստեփանոս Ե. կաթողիկոսին

---

[3] Հայկ Մարգարյանը «Ստեփանոս Սալմաստեցի և Միքայել Սեբաստացի կաթողիկոսների հայեցակարգերը հայ ժողովրդի ազատագրության վերաբերյալ» հոդվածում («Ակունք», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (10), էջ 81-94) հանիրավի արժեզրկում է Հայ եկեղեցու ներդրումն ազգային-ազատագրական պայքարի գործում՝ անտեսելով այն հսկայածավալ աշխատանքը, որ ձեռնարկել է Ստեփանոս Ե. Սալմաստեցին՝ գաղափարական և գործնական նոր հանգրվանի հասցնելով հայ ազատագրական պայքարը: Օրինակ՝ Լեոն այդ ժողովն ու դրա արդյունքը համարում է շրջադարձային. նա գրում է. *«Եվ ուրեմն մենք ունենք մեր առջև ազատագրական շարժման անդրանիկ քայլը, մի շարժման, որ մեր Նոր պատմության գլխավոր բովանդակությունն է կազմում»* (տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., Եր., 1969, էջ 186):

[4] Ստեփանոս Սալմաստեցու կաթողիկոսության թվականների շուրջ հայ պատմագրության տվյալները և պատմագիտական ուսումնասիրություններում առկա տեսակետները տարբեր են, իսկ երբեմն էլ՝ հակասական:

[5] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 2611:

[6] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., էջ 184: Մաղաքիա արք. Օրմանյանը Կ. Պոլսում Ստեփանոս Ե. կաթողիկոսի հայտնվելը առնչում է պատմական այն իրադարձության հետ, երբ 1514 թ. օսմանյան բանակները, Չալդրանի դաշտում հաղթանակ տանելով պարսկական զորքերի դեմ, Թավրիզից և Պարսկաստանի այլ բնակավայրերից իրենց հետ որոշ բնակչություն տարան Օսմանյան կայսրություն, այդ թվում՝ նաև բազմաթիվ արհեստավոր հայերի (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 2595):

«Սալմաստեցի» են կոչում նաև Առաքել Դավրիժեցին[7] և Միքայել Չամչյանը[8]: Ըստ Դավրիժեցու հաղորդած տեղեկությունների՝ Ստեփանոս Սալմաստեցին 1541 թ. դարձել է աթոռակից կաթողիկոս[9], իսկ 1545 թ.՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

«Սալմաստեցի» և «Առնջեցի» կաթողիկոսի նույն կամ տարբեր անձ լինելու խնդիրը: Ստեփանոս Ե. կաթողիկոսի «Սեբաստացի» անվան առնչությամբ չենք կարող չանդրադառնալ մի կարևոր հանգամանքի, որը վերաբերում է Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Առնջեցի[10] կաթողիկոսների նույն կամ տարբեր անձինք լինելու խնդրին: 1547 թ. ժողովը և Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսի գործունեությունը ուսումնասիրել են մի շարք հայագետներ՝ շրջանառելով կարևոր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններ և հրապարակելով արժեքավոր վավերագրեր: Այս ուսումնասիրողների կարծիքներն իրարամերժ են, երբեմն՝ հակասական. գիտական այս շփոթի մեջ դժվար է վերջնական եզրահանգումներ կատարել: Այսպես՝ 1931 թ. Արշակ Ալպոյաճյանը «Սիոն» ամսագրի Ժ. համարում լույս է ընծայել մի հոդված[11], որտեղ քննության առնելով աղբյուրների հաղորդած տեղեկությունները և իր օրոք ընթերցողի սեղանին դրված ուսումնասիրությունները՝ հանգում է այն եզրակացության, որ Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Առնջեցի կաթողիկոսները տարբեր անձեր են[12]: Սակայն այս պնդումը տարածում չի գտնում գիտական շրջանակում: Ավելին՝ Հակոբ Անասյանը[13], քննության առնելով մի շարք հիշատակարանների և պատմիչների հաղորդած տեղեկությունները, հակադրվում է Արշակ Ալպոյաճյանին[14]: Նա անուղղակի հերքում է վերջինիս տեսակետը. *«Ի միջի այլոց ասենք, որ Սալմաստեցու և Արընջեցու տարբեր անձեր լինելը հաստատող ոչ մի փաստական տվյալ չկա»*[15]: Թվում էր՝ թնջուկը լուծվեց: Սակայն խնդրո վերաբերյալ մեկ այլ ուսումնասիրության հեղինակ, վերլուծելով գիտական շրջանակում հայտնի՝ աղբյուրագիտական արժեք ունեցող նյութերը, եզրակացնում է, որ Ստեփանոս Սալ-

---

[7] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Եր., 1988, էջ 342:

[8] Տե՛ս **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ., Եր., 1984, էջ 517:

[9] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, էջ 342:

[10] Ստեփանոս Առնջեցու մասին հիշատակում է Առաքել Դավրիժեցին (**Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, էջ 343): Այս կաթողիկոսի գոյությունն ընդունում են Մաղաքիա արք. Օրմանյանը (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 2641), ինչպես նաև Ղևոնդ Ալիշանը. (տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, Վենետիկ, 1896, էջ 330):

[11] Տե՛ս **Ա. Ալպոյաճեան**, Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Առնջեցի կաթողիկոսներու ժամանակագրութիւնը, «Սիոն», 1931, Ժ., էջ 305-311:

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 310:

[13] Տե՛ս **Հ. Անասյան**, Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ, «Էջմիածին», 1956, Ը.-Թ., էջ 93-99, ԺԱ.-ԺԲ., էջ 68-76:

[14] Տե՛ս նույն տեղը, ԺԱ.-ԺԲ., էջ 68:

[15] Նույն տեղում, էջ 69:

մաստեցին և Ստեփանոս Առնջեցին տարբեր անձեր են[16]: Այս հանգամանքը երկար ժամանակ անուշադրության է մատնվում խնդրով հետաքրքրվող գիտնականների կողմից:

1981 թ. Հակոբ Անասյանի հեղինակությամբ նախ «Սիոն» ամսագրում[17], ապա որպես առանձնատիպ[18] լույս տեսավ նոր ուսումնասիրություն՝ նվիրված Ստեփանոս Ե. կաթողիկոսի գործունեությանը: Այստեղ հեղինակը հիմնականում անդրադառնում է Գրիգոր վրդ. Պետրովիչի դիտարկումներին, որտեղ մեկ առ մեկ հերքվում են կաթողիկոսի առաքելությանը, մահվան թվականին և մի շարք այլ հարցերի առնչվող տեսակետները: Անասյանի քննության նյութը հիմնականում վերաբերում է Սալմաստեցու մահվան թվականի խնդրին, նրա լվովյան՝ կարծեցյալ դամբարանի արձանագրության իսկությանն ու վավերականությանը և հարակից այլ հարցերի: Սալմաստեցու մահվան թվականի առնչությամբ Հ. Անասյանը, համադրելով մինչ այդ եղած ուսումնասիրություններն ու աղբյուրները, կարողանում է ստանալ տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների առավել ճշգրիտ պատկերը: Հակոբ Անասյանը հիմնավոր ապացուցում է Սալմաստեցու դամբարանի և դրա արձանագրության՝ Ստեփանոս Ե. կաթողիկոսին չվերաբերելը[19]:

Ժողովի մասնակիցների խնդիրը: Ստեփանոս Ե. Սալմաստեցին ժամանակաշրջանի ուսյալ և լուսավորյալ անձանցից էր: Կաթողիկոսի մասին անթաքույց գովեստով է խոսում Միքայել Չամչյանը[20]:

Նրա հայրապետության շրջանում տեղի ունեցող թուրք-պարսկական պատերազմները և դրանց բոլոր ծանր հետևանքները Հայաստանի համար չէին կարող չմտահոգել նրան:

Լրջագույն ելք էր համարվում գտնել մի այնպիսի երկիր կամ դաշինք, որը, հանուն Հայաստանի ամբողջական ազատագրման, պատերազմ կհայտարարեր Օսմանյան և Պարսկական կայսրություններին միաժամանակ: Դա, ըստ պատմաբան Պ. Հովհաննիսյանի, հայ ազատագրական շարժման առանձնահատկություններից էր[21], որը իր ժամանակին գիտակցել էր նաև Ստեփանոս Ե. Սալմաստեցի հայրապետը: 1547 թ. նրա նախաձեռնությամբ Ս. Էջմիածնում հրավիրվում է խորհրդաժողով: Թե ովքեր են եղել ժողովի մասնակիցները, հստակ

---

[16] Տե՛ս **Գրիգոր վրդ. Պետրովիչ,** Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոս Էջմիածնի (1543-1552), Վենետիկ, 1964, էջ 82:

[17] Տե՛ս **Յ. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի, «Սիոն», 1980, ԺԱ.-ԺԲ., էջ 311-321, 1981, Ա.-Բ., էջ 38-48:

[18] Տե՛ս **Յ. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի. հատուածներ նոր ուսումնասիրութիւնից, Երուսաղէմ, 1981, էջ 24:

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 16-20:

[20] **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ., էջ 517:

[21] Տե՛ս **Պ. Հովհաննիսյան**, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես - XVIII դարի վերջ), Եր., 2010, էջ 8-9:

հայտնի չէ: Իտալերենով պահպանված «Աղերսագիր տերանց Հայոց»[22] գրության թարգմանությունն անորոշ վկայում է. *«…եւ մեք խեղճ Հայքս ի մասին Պարսից»*[23]: Բնականաբար, այս հիշատակությունը որևէ բան չի ասում մասնակիցների քանակի և նրանց զբաղեցրած դիրքի մասին: Ա. Հովհաննիսյանը խորհրդաժողովի մասնակիցների խնդրի առնչությամբ գրում է. *«Ովքե՞ր էին խորհրդաժողովին մասնակցած «իշխանները», չգիտենք ստուգապես: Միայն չպիտի լիներ ենթադրել, որ խոսքը ոչ միայն հայ մելիքների, այլև հայ խոջաների ու «դրվլաթավորների» մասին կարող է լինել»*[24]: Այս ենթադրությունը նա փորձում է հիմնավորել հայ-իտալական առևտրային կապերով[25]:

Ա. Հովհաննիսյանի՝ ժողովի մասնակիցների վերաբերյալ ենթադրությունը համարում ենք տրամաբանական, քանի որ հետագա դարերում խոջայական դասը սահուն կերպով իր ձեռքն էր վերցնելու հայ ազատագրական պայքարն առաջնորդելու պատասխանատվությունը: Սակայն այստեղ մեծանուն պատմաբանը ուշադրություն չի դարձնում ժողովում հոգևորականների ներկայության խնդրին: Ողջունելով Վենետիկի իշխանություններին՝ նամակի հեղինակներն ակամա ներկայացնում են ժողովի մասնակիցների շրջանակը. **«…***ողջոյն կու ղրկեմք…. ի կողմանէ մեր համօրէն եպիսկոպոսաց, վարդապետաց եւ բովանդակ կղերին, եւ ամենայն ազնուականաց եւ բովանդակ մեր ազգին»*[26]: Այս վկայությունը, անշուշտ, բավարար է ժողովականների մասին որոշակի պատկերացում կազմելու համար:

Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը: Բնականաբար, ժողովում առաջին հերթին քննարկվել է պարսկական լծից ազատագրման հարցը[27]: Ժողովականների ուշադրության կիզակետում հայտնված մյուս խնդիրն այն էր, թե ո՞ր պետության օգնությանը պետք է դիմել հաջողության հասնելու համար: Տվյալ ժամանակաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական կացությունը[28] հաշվի առնելով՝ վստահաբար կա-

---

[22] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 326:

[23] Նույն տեղում, էջ 329:

[24] **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., Եր., 1959, էջ 27:

[25] Տե՛ս նույն տեղը, էջ 27:

[26] **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 329:

[27] Տե՛ս **Ն. Ակինեան**, Ազատութեան շարժումը ԺԵ.-ԺԶ. դարուն Հայոց մէջ, «Հանդէս ամսօրեայ», 1917/18, Ա.-ԺԲ., էջ 145:

[28] ԺԶ դարում Եվրոպայում տիրած կրոնաքաղաքական և ռազմական բախումների մասին առավել մանրամասն տե՛ս **St. Ozment**, The Age of Reform 1250–1550: an intellectual and religious history of late medieval and reformation Europe, New Haven: Yale University Press, 1980. **P. Zagorín**, Rebels and rulers, 1500–1660, Cambridge and New York, 1984. նաև՝ **A. Espinosa**, The Grand Strategy of Charles V (1500–1558): Castile, War and Dynastic Priority in the Mediterranean, "Journal of Early Modern History", 2005, 9.3, էջ 239–283. **M. Mallett & C. Shaw**, The Italian Wars: 1494-1559. **Прокопьев А. Ю.** Германия в эпоху религиозного раскола: 1555–1648. СПб, 2002. **Юрьев М. П.** Карл Пятый и его время. М., 2012:

րելի է ասել, որ վերջին հարցը բուռն քննարկման առարկա է եղել խորհրդաժողովում:

Գաղտնի ժողովում որոշվեց ձևավորել լիազոր պատվիրակություն, որը պետք է բանակցեր եվրոպական պետությունների հետ և փորձեր լուծել Հայաստանի արևելյան[29] հատվածի ազատագրման հարցը: Այս տեսակետի վրա հատկապես զգալի էր հայ ազատագրական լեգենդի[30] ազդեցությունը: 1530-1540-ական թթ. Եվրոպայում ստեղծված քաղաքական բարենպաստ պայմանները հույսեր էին ներշնչում հայերին[31]:

Պատվիրակության կազմը: Ձևավորված պատվիրակությունը գլխավորում էր Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը: Թեև *«…Ստեփանոս Սալմաստեցու առաքելությունը գերազանցորեն քաղաքական էր»*[32], այնուամենայնիվ պատվիրակության կազմը և վերջինիս ճանապարհորդության նպատակը քողարկված էին կրոնական շղարշով:

Ս. Էջմիածնում գումարված խորհրդաժողովը համարվել է գաղտնի. մեր կարծիքով՝ «գաղտնի» որակումը ենթադրում է ոչ թե ժողովի օրն ու տեղը թաքցնելու, այլ քննարկվող հարցերը ծածուկ պահելու միտում, որը պետք է ավելորդ կասկածներից զերծ պահեր պատվիրակության անդամներին: Այլապես դժվար էր պատկերացնել Ս. Էջմիածնում, հաչս բոլորի, այդ թվում՝ պարսկական և թուրքական լրտեսների, նման ժողովի գումարումը: Այս իրողություններով էր պայմանավորված նաև պատվիրակության կազմի ձևավորումը. դրա անդամները հիմնականում հոգևորականներ էին, և այս հանգամանքը զուտ կրոնական բնույթ էր հաղորդելու ճանապարհորդությանը:

Ցավոք, պատվիրակության անդամների անունները չեն պահպանվել: Ղ. Ալիշանի վկայությամբ՝ Հայոց կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը համալրվել է 1548 թ., երբ Լվովում որպես հայրապետի թարգմանիչ և քարտուղար միացել էր Սիմեոն Լեհացի սարկավագը[33]: Ամենայն հավանականությամբ, կաթողիկոսը, տեսնելով Սիմեոն Լեհացու կարողությունները, նրան ընդգրկել է պատվիրակության կազմում՝ գրագրություն վարելու և անհրաժեշտ գրություններ պատրաստելու համար: Միքայել Չամչյանի՝ պատվիրակության կազմում ընդգրկված հոգևորականների մասին տեղեկությունից զատ՝ նույն հարցին

---

[29] Պատմաբան Վ. Դիլոյանը կարծում է, որ այս ժողովում որոշվել է Հայաստանի ամբողջական ազատագրության հարցը՝ պատճառաբանելով, որ մինչև 1555 թ. թուրք-պարսկական պայմանագիրը Հայաստանի տարածքի հարցը դեռևս վիճարկվում էր (տե՛ս «Հայոց պատմություն», հտ. II, միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Եր., 2014, էջ 633):

[30] Հայ ազատագրական լեգենդի մասին մանրամասն տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, Եր., 2016, էջ 41-75:

[31] Տե՛ս **Վ. Բայբուրդյան**, Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011, էջ 217:

[32] **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., էջ 186:

[33] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 593, **Գրիգոր վրդ. Պետրովիչ**, Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ (1350-1624), Վիեննա, 1980, էջ 155:

անդրադարձել է նաև Գրիգոր վրդ. Պետրովիչը՝ իտալական աղբյուրների[34] հիմամբ հեղինակած «Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ» ուսումնասիրությունում, որտեղ ի մասնավորի նշում է, որ կաթողիկոսն *«իր հետ ուներ արքեպիսկոպոս մը՝ զոր վարդապետ կը կոչէին, եւ եպիսկոպոս մը, որ Հռոմի մէջ մեռաւ»*[35]: Սույն հիշատակություններից բացի՝ ներկա պահին այլ տեղեկություն չկա պատվիրակության մասին, իսկ վերջինիս աշխարհական անդամների վերաբերյալ աղբյուրներն ընդհանրապես լռում են:

Պատվիրակության եվրոպական գործունեությունը: Ի սկզբանե պատվիրակության նպատակակետը եղել է Վենետիկը, ապա ճանապարհորդության կրոնական շղարշը պահպանելու համար պատվիրակությունը պետք է մեկներ Հռոմ: Այս մասին վկայում է վենետիկյան արխիվում պահպանված հայտնի «Աղերսագիրը»[36]: Ուշագրավ է, որ գրության հեղինակները նրբորեն չեն անդրադառնում քննարկվող խնդիրներին, այլ պարզապես անորոշ նշում են՝ «…շատ պատճառաց համար»:

Մ. Չամչյանի հաղորդմամբ՝ Հայոց հայրապետը Կ. Պոլսում *«տեղեկացեալ՝ թէ մերձեալ է ժամանակ յոբելեան*[37] *օրհնութեան ուխտագնացութեան ի Հռովմ, ցանկացաւ եւ ինքն երթալ անդր յուխտ սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի»*[38]: Ըստ այս հիշատակության՝ թվում է, թե Հայոց կաթողիկոսը Կ. Պոլսում է որոշել Հռոմ գնալ, այնինչ «Աղերսագիրը» հաստատում է, որ դա ի սկզբանե էր ծրագրված:

Պատվիրակությունը, դուրս գալով Ս. Էջմիածնից[39], շուտով հասնում է Կ. Պոլիս, որտեղ, ինչպես երևում է, նրանց ջերմ ընդունելության է արժանացրել Կ. Պոլսի հայոց պատրիարք Աստվածատուր Յաղուպյանը (1537–1550 թթ.): Մեր խորին համոզմամբ՝ օսմանյան մայրաքաղաքում որոշ ժամանակ մնալը ինքնապատակ չէր: Չենք կարծում, թե Ստեփանոս Ե. Սալմաստեցին գնում էր Կ. Պոլիս՝ օսմանյան ուժերին ապավինելու, այլ հավանաբար իրական նպատակը թաքցնելու համար էին այդպես ներկայացրել տեղական իշխանություններին: Պարզ է, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցին ցանկացել է եվրոպական երկրների՝ Կ.

---

[34] Տե՛ս **Assemani, S. E**. Bibliothecae Mediceae Lavrentiae et Palatinae Codicum mms. Orientalivm Catalogvs. Florentiae, 1742, էջ 60:

[35] **Գրիգոր վրդ. Պետրովիչ**, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ (1350-1624), էջ 157:

[36] Տե՛ս **Ղ. Այիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 329-330:

[37] Ստեփանոս Ե. Սալմաստեցին ժամանել է Հռոմ 1549-ին. հաջորդ տարին հոբելյանական էր, և Պողոս Գ. պապը որոշել էր այն նշել շուքով (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 2614-2615):

[38] **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ., էջ 518:

[39] Ա. Հովհաննիսյանը, հիմնվելով լեհահայ տարեգրությունների հիշատակությունների վրա, ոչ համոզիչ փաստարկներով կարծում է, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցին, հետապնդվելով պարսկական իշխանությունների կողմից, փախել է Ս. Էջմիածնից և գահընկեց հայտարարվել՝ իր տեղը զիջելով Միքայել Սեբաստացուն (**Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., Եր., 1959, էջ 32):

Պոլսում գտնվող դեսպանների ու կրոնական գործիչների միջոցով ստեղծել բարենպաստ պայմաններ[40] հետագայում եվրոպական միապետների հետ հայ ժողովրդի ազատագրման հարցը քննարկելու համար:

Դժբախտաբար, Հայոց հայրապետի՝ կոստանդնուպոլսյան գործունեության վերաբերյալ չկան բավարար տեղեկություններ, սակայն պետք է նշել, որ Կ. Պոլսում դրական արդյունք էր արձանագրվել, որի վկայությունը պատվիրակության ճանապարհորդության շարունակությունն էր դեպի Եվրոպա[41]:

Հայոց պատվիրակության հաջորդ կայանը Վենետիկն էր, որը «Աղերսագրի» հեղինակները բնորոշում էին որպես «աստվածահիմն և քրիստոսաշեն» քաղաք: Այս գրության մեջ տեղ գտած երկարաշունչ գովաբանությունները՝ ուղղված Վենետիկի իշխանություններին, ոչ թե ավելորդ շողոքորթություն էին, այլ դրվատանքի և բարեկամության խոսքեր, որոնցով փորձում էին շահել Վենետիկի կառավարության դրական վերաբերմունքը[42]: Բնականաբար, վենետիկյան կառավարության և հայկական պատվիրակության միջև բանակցությունները զուտ քաղաքական էին: Հատկանշական է մի իրողություն. «Աղերսագրի» իտալերեն թարգմանության մեջ բացակայում են ստորագրությունները, միայն անորոշ նշվում է՝ «հայ տերեր»: Լեոն, հետևելով Ղ. Ալիշանին[43], նշում է. *«...ստորագրություններ այս աղերսագրի տակ չկան, բայց նրանք եղել են գուցե առանձին թղթի վրա և պատկանելիս են եղել հայ աշխարհական մեծամեծներին»*[44]: Ն. Ակինյանը ևս համաձայն է Ղ. Ալիշանի տեսակետին[45]: Ցավոք, հայկական պատվիրակության վենետիկյան գործունեության վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները ևս խիստ սակավ են[46]:

Ըստ Գրիգոր վրդ. Պետրովիչի՝ Ստեփանոս Ե. Սալմաստեցին 1548 թ. աշնանն արդեն Վենետիկում էր[47]. որոշ ժամանակ այստեղ բանակցություններ վարելուց հետո նույն թվականի վերջերին նա մեկնում է Հռոմ[48]:

Պետք է նշել, որ օգնության ակնկալիքով Եվրոպա ուղևորված հայկական պատվիրակությունը գերագնահատել էր կաթոլիկ եկեղեցու՝

---

[40] Տե՛ս **Յ. Միրունի**, Պոլիս եւ իւր դերը, հտ. Ա. (1453-1800), Պէյրութ, 1956, էջ 413:

[41] Տե՛ս **Ն. Ակինեան**, Ազատութեան շարժումը ԺԵ.-ԺԶ. դարուն Հայոց մէջ, էջ 146:

[42] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., էջ 185:

[43] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 325:

[44] **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., էջ 186:

[45] Տե՛ս **Ն. Ակինեան**, Ազատութեան շարժումը ԺԵ.-ԺԶ. դարուն Հայոց մէջ, էջ 146:

[46] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 330 և **Ն. Ակինեան**, Ազատութեան շարժումը ԺԵ.-ԺԶ. դարուն Հայոց մէջ, էջ 146:

[47] Տե՛ս **Գրիգոր վրդ. Պետրովիչ**, Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ (1350-1624), էջ 155: Պատմագիտական ուսումնասիրություններում Վենետիկում պատվիրակության գտնվելու թվականի հետ կապված կան տարաձայնություններ:

[48] Տե՛ս նույն տեղը:

Արևմուտքի վրա ունեցած ազդեցությունը[49]: Բացի դրանից՝ հայկական պատվիրակությունն էլ պատրաստ չէր դավանական լուրջ զիջումների[50]:

Ստեփանոս Ե. Սալմաստեցու նախատեսած բանագնացությունը մոտենում էր ավարտին. նրա գլխավորած պատվիրակությունն անցնում է Հռոմ: Բնականաբար, առաջին հարցը, որ արծարծվեց օրակարգում, եվրոպական հզոր գահակալների առջև Հայաստանի ազատագրության համար միջնորդելու խնդիրն էր: Բայց, ցավոք, ինչպես նախորդ դարերում, այս անգամ ևս կրոնական գործոնը ետ մղեց քաղաքական արդարացի նպատակը[51]: Ա. Հովհաննիսյանը մեր ուշադրությունը հրավիրում է մի շատ կարևոր իրողության վրա, որը հաշվի չէր առել հայկական կողմը՝ *«...պապական Եվրոպան և Հռոմը այս պահին հետաքրքրվում էին ոչ այնքան Իրանի, որքան Թուրքիայի գործերով»*[52], իսկ, ինչպես նշել ենք, օգնության խնդրանքով դիմել էին *«խեղճ Հայքս ի մասին Պարսից»*[53]:

Միքայել Չամչյանը հիշատակում է, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցին ջերմ ընդունելություն է գտել Պողոս Գ. պապի կողմից: Մենք չենք կարող ասել, թե ինչ արդյունք կունենային կաթողիկոսի և պապի բանակցությունները, քանի որ 1550 թ. նոյեմբերին պապը մահանում է[54]: Որոշ ժամանակ դադարում են Հռոմի հետ բանակցությունները, որոնք, սակայն, վերսկսվում են երկու-երեք ամիս անց, երբ ընտրվում է Հռոմի նոր պապը՝ Հուլիոս Գ-ն[55]: Գրիգոր վրդ. Պետրովիչը, մեջբերելով վենետիկցի պատմագրի հաղորդած տեղեկությունը, նշում է, որ Հայոց կաթողիկոսի և նորընտիր պապի հանդիպումն անցնում է ջերմ մթնոլորտում: Սակայն Ստեփանոս Ե. Սալմաստեցին հասկանում է, որ կրոնական խնդիրների շուրջ բանակցությունները շեղում են պատվիրակությանը բուն նպատակից, իսկ Հռոմում ազատագրության խնդրի լուծմանն ուղղված ձեռնարկները տապալված են, ուստի 1550 թ. հայկական պատվիրակությունը լքում է Հռոմը[56]: Թվում է՝ բանագնացությունը ավարտված էր, սակայն կաթողիկոսը, չընկրկելով անհաջողություններից, որոշում է վերադարձի ճանապարհին բանակցել արդեն չնախատեսված երկրների ղեկավարների հետ: Այդ մասին են վկայում

---

[49] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ., էջ 187, նաև՝ **Պ. Հովհաննիսյան**, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես - XVIII դարի վերջ), էջ 15:

[50] Տե՛ս **Ց. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի. հատուածներ նոր ուսումնասիրութիւնից, էջ 6:

[51] Տե՛ս **Օշական աբեղ. Չօլոեան**, Հայ ազատագրական շարժման նախափորձերը (ԺԶ.-ԺԷ. դար), «Հասկ», մարտ, 1968, էջ 95:

[52] **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., էջ 30:

[53] **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ.-[Ժ]Դ. եւ ի ԺԵ.-[Ժ]Զ. դարս, էջ 329:

[54] Տե՛ս **Գրիգոր վրդ. Պետրովիչ**, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ (1350-1624), էջ 159:

[55] Տե՛ս նույն տեղը, էջ 160:

[56] Տե՛ս նույն տեղը, էջ 160-161:

պապի՝ Հայոց կաթողիկոսին հանձնած նամակները[57]:

Պետք է արձանագրել, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցի հայրապետի և Գերմանիայի կայսր Կարլ Ե.-ի միջև[58] տեղի ունեցած բանակցությունների մասին մեզ շատ քիչ և վիճահարույց տեղեկություններ են հայտնի[59]: Վերլուծելով տվյալ ժամանակահատվածում Գերմանիայի աշխարհաքաղաքական դրությունը՝ Ա. Հովհաննիսյանը նրան ապավինելը համարում էր անիրատեսական[60]:

Գերմանական կայսեր հետ բանակցությունների անհաջողությունը, որքան էլ զարմանալի է, չհիասթափեցրեց Ստեփանոս Ե. Սալմաստեցուն: Նա շարունակեց օգնության փնտրտուքը. այս անգամ հանգրվանը Լեհաստանն էր: Այստեղ իշխում էր եվրոպական արքունիքներում հայտնի Սիգիզմունդ Բ. (1548-1572 թթ.) թագավորը[61]: Ցավոք, այս տիրակալը ևս չէր կարող օգնել հայերին, քանի որ Լեհաստանը լարված հարաբերություններ ուներ Ավստրիայի ու Թուրքիայի, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև մոսկովյան իշխանությունների հետ:

Վարշավայում վերլուծելով ստեղծված իրադրությունը՝ հայկական կողմը հասկացավ, որ Եվրոպան այս պահին առավել շահագրգռված է թուրքական սպառնալիքի չեզոքացմամբ, և այդ ճանապարհին Իրանի հետ թշնամանքը դուրս էր եվրոպական գահակալների ծրագրերից: Մյուս կողմից՝ աշխարհաքաղաքական դաշտում հայտնվում էր նոր խաղացող՝ ի դեմս ցարական Ռուսաստանի: Թվում էր՝ ի հակադրություն եվրոպական տերությունների՝ ռուսական և թուրքական իշխանությունները, ինչպես XV դարավերջին և XVI դարասկզբին, այժմ ևս փորձում էին բարդ և ոչ միանշանակ փոխհարաբերություններին

---

[57] Տե՛ս **Ց. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի. հատուածներ նոր ուսումնասիրութիւնից, էջ 5:

[58] Տե՛ս **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ., էջ 518: Թեև ոչ հիմնավոր, սակայն Հ. Անասյանը, ներքաղաքական և կրոնական խժդժությունները հաշվի առնելով, տարակուսելի է համարում նման հանդիպումը (տե՛ս **Ց. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի. հատուածներ նոր ուսումնասիրութիւնից, էջ 12): Ի հակադրություն Հ. Անասյանի՝ նշենք, որ տարակուսելին ոչ թե կաթողիկոսի և կայսեր հանդիպումն է, որն անկախ որևէ հանգամանքից կարող էր տեղի ունենալ, այլ այն, որ Գերմանիայի տիրակալը, իր երկրի ներքին և արտաքին կրոնաքաղաքական բազմաթիվ խնդիրները մի կողմ թողած կամ դրանց զուգահեռ, օգնության ձեռք կմեկներ հայերին:

[59] Թեև Միքայել Չամչյանը և նրա օգտագործած աղբյուրները վկայում են Ստեփանոս Ե. Սալմաստեցու ու Կարլ Ե.-ի միջև սկսված բանակցությունների մասին, սակայն պատմագիտական ուսումնասիրությունները ոչ միանշանակ են անդրադառնում այս խնդրին (տե՛ս **Ց. Անասեան**, Ստեփանոս Սալմաստեցի. հատուածներ նոր ուսումնասիրութիւնից, էջ 10-13):

[60] Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., էջ 30-31:

[61] Այս թագավորը բնորոշվում է որպես թույլ և ոչ վճռական տիրակալ, որը չուներ հստակ գործելաոճ ու հաճախ էր ետ կանգնում իր որոշումներից կամ փոխում դրանք (տե՛ս «Միջին դարերի պատմություն», խմբ.՝ Ս. Սկազկին և Ռ. Վայնշտեյն, թարգմ.՝ Հ. Մազմանյան, հտ. 2, գիրք II, Եր., 1940, էջ 238): Այսպիսի որակումը թույլ է տալիս եզրակացնել, որ այս գահակալի հետ ևս օգնության հույսեր կապելն իրատեսական չէր:

հաղորդել բարեկամական բնույթ: Բնականաբար, վերջիններիս՝ միմյանց նկատմամբ ոչ ագրեսիվ քաղաքականությունը նպատակաուղղված էր իրենց աշխարհակալական նկրտումների շրջանակներում Իրանը թուլացնելուն: Փաստորեն այս հարցում համընկնում էին հայերի եւ ռուսների քաղաքական շահերը, որտեղ կրոնական խնդիրներն իրապես մղված էին ետին պլան: Հենց այս գիտակցումն էր, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցուն ստիպեց օգնության խնդրանքով դիմել ցարական Ռուսաստանին, որտեղ գահակալում էր Իվան Դ. Ահեղը (1547-1584 թթ.): Հայոց պատվիրակությունը մեկնում է Մոսկվա[62]: Այստեղ տեղի ունեցած բանակցությունների վերաբերյալ ևս տեղեկություններ չկան. կաթողիկոսը, հավանաբար, ցարի խոստումներից զատ, որևէ բան չի ստանում: Պատճառը պարզ էր. ցարական Ռուսաստանն այդ ժամանակ առաջնահերթ էր համարում իր ծավալապաշտական քաղաքականությունն իրականացնել այլ ուղղությամբ: Բացի այդ՝ Ռուսաստանի հարաբերությունները լարված էին Լիտվայի, Լեհաստանի, Դանիայի և Շվեդիայի հետ, որոնց դեմ, ի վերջո, ստիպված եղավ պատերազմական գործողություններ սկսել[63]:

Մոսկովյան բանակցություններից հետո Հայոց հայրապետի գլխավորած պատվիրակությունը վերադարձավ հայրենիք:

Եզրակացություն: Այսպիսով, Ստեփանոս Սալմաստեցու նախաձեռնությամբ գումարված խորհրդաժողովն իր առջև առաջին անգամ համակարգված պայքար սկսելու և օտարի լծից Արևմուտքի օգնությամբ ազատագրվելու խնդիր դրեց: Սակայն XVI դարի առաջին կեսին դեռևս չկար քաղաքական և ռազմական այն ուժը, որով հնարավոր կլիներ կազմակերպել այդ պայքարը. երկրորդ՝ եկեղեցուց զատ, չկար առաջնորդող այլ ուժ, իսկ Հայ եկեղեցու՝ ազատագրական պայքարի համար սկսած բանակցությունների փակուղում հայտնվելը պայմանավորված էր կողմերի կրոնական հայացքների տարակարծություններով և հակասություններով, որոնք բանակցությունների ժամանակ Արևմուտքի պնդմամբ դառնում էին առաջնային՝ երկրորդական դարձնելով ազատագրական պայքարը:

Այսպիսով կարող ենք եզրակացնել.

1. 1547 թ. խորհրդաժողովի նախաձեռնողը Հայ եկեղեցին էր:
2. Խորհրդաժողովին, բարձրաստիճան եկեղեցականներից զատ,

---

[62] Տե՛ս **Միքայել Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ., էջ 518:

[63] Տե՛ս «Իվան IV Վասիլևիչ» (տե ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 4, Եր., 1978, էջ 421. ռուսաց այս ցարի վարած քաղաքականության և պատերազմների, ինչպես նաև նրա տարաբնույթ գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս **Isabel de Madariaga**, Ivan the Terrible. First Tsar of Russia, London: Yale University Press, 2005. **J. Martin**, Ivan IV the Terrible, Medieval Russia 980–1584, 2nd ed., New York: Cambridge University Press, 2007. հմմտ. **Иловайский Д. И.**, Иван Грозный и Стефан Баторий в борьбе за Ливонию, «Исторический вестник», 1889, т. 35, № 2, էջ 334-347. **Королюк В. Д.**, Ливонская война, Москва, 1954. «Всемирная История», т. 4, М., 1958. **Зимин А. А.** , Реформы Ивана Грозного: очерки социально-экономической истории России середины XVI в., М., 1960.):

մասնակցել են նաև Արևելյան Հայաստանի մելիքները:

3. Գաղտնի է եղել ոչ թե ժողովը, այլ դրա նպատակը:

4. Խորհրդաժողովում որոշվել է ազատագրել Հայաստանի արևելյան հատվածը:

5. Արևելյան Հայաստանի ազատագրությունը պետք է տեղի ունենար քրիստոնյա Արևմուտքի օժանդակությամբ:

6. Ստեփանոս Ե. Սալմաստեցու՝ պատվիրակության ղեկավար լինելու իրողությունը պայմանավորված էր ո՛չ միայն լեզուների իմացությամբ ու կրոնական-աշխարհաքաղաքական իրավիճակի մասին հստակ պատկերացումներով, այլ նաև նրա կարգավիճակով: Այսինքն՝ հայ ժողովրդի հոգևոր առաջնորդ լինելը թույլ էր տալիս ազատ մուտք ունենալ որևէ երկրի արքունիք և անմիջապես բանակցել դրանց ղեկավարների հետ:

7. Ստեփանոս Ե. Սալմաստեցին բանակցել է ոչ միայն Գերմանիայի ու Ավստրիայի կայսրերի, այլ նաև Լեհաստանի և Ռուսաստանի գահակալների հետ:

8. Ստեփանոս Ե. Սալմաստեցին հպատակություն չի հայտնել Հռոմի պապին, իսկ եթե դավանաբանության շուրջ եղել են բանակցություններ, ապա դրանք մնացել են անավարտ և անորոշ:

9. Ստեփանոս Ե. Սալմաստեցու պատվիրակության նպատակը եղել է բացառապես քաղաքական, որը քողարկվել է կրոնական շղարշով:

10. Պատվիրակության գործունեությունը ամբողջական և համակողմանի ներկայացնելու համար անհրաժեշտ է կրկին ուսումնասիրել եվրոպական մի շարք երկրների արխիվները, որը, ցավոք, առայսօր արված չէ:

11. Ստեփանոս Ե. Սալմաստեցու գործունեության վերաբերյալ հայ և օտար կաթոլիկ ուսումնասիրողների մեկնաբանությունները միակողմանի են ներկայացնում փաստերն ու իրողությունները:

Կարելի է արձանագրել, որ այս պատվիրակությունը նախանշեց այն ճանապարհը և ստեղծեց այն բարենպաստ պայմանները, որով հետագայում երկար ժամանակ պետք է ընթանար հայ ազատագրական պայքարը:

Բանալի բառեր - *ազատագրական պայքար, 1547 թ. ժողով, պատվիրակություն, «Աղերսագիր», Ստեփանոս Ե. Սալմաստեցի, կաթողիկոս, Հռոմի պապ*

ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН – ***Собор 1547 г. в св. Эчмиадзине.*** – Вопросы, связанные с собором 1547 года, до сих пор нуждаются в глубоком исследовании. Поныне не оценена его направляющая роль для нового этапа национально-освободительной борьбы, совершенно недостаточно изучены зарубежные архивы, не собраны воедино тексты армянских историографов, относящиеся к нему, и не проанализированы их выводы. В статье рассмотрен ход собора, всесторонне разбираются оценки деятельности образованной на нём делегации и делается обоб-

щающего характера заключение.

Ключевые слова: *освободительная борьба, собор 1547 г., делегация, прошение (петиция), Степанос Салмастеци, католикос, папа Римский*

PRIEST ARARAT POGHOSYAN – ***The Council of Etchmiadzin (1547). –*** The council held in Etchmiadzin in 1547, as well as some issues associated with it, have not yet been thoroughly studied. Its crucial role on the new phase of Armenian national-liberation movement has not been evaluated, foreign archives referring to the activity of the Armenian delegation have not been adequately investigated and the conclusions of the Armenian historical thought have not been collected. The article discusses the Council itself, the assessment of the activity of the delegation as well as the comprehensive exploration and analysis of historical conclusions.

Key words: liberation struggle, Assembly 1547, delegation, petition (demand), Stepanos Salmastetsi, catholicos, Pope of Rome

Ներկայացվել է՝ 12.05.2019
Գրախոսվել է՝ 12.07.2019
Ընդունվել է տպագրության՝ 19.07.2019